



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

«ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊԸ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 20-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

18 մարտի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊԸ-ի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի

25-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի հունվարի 22-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի փետրվարի 10-ին:

Օրենքի՝ «**Սնանկության գործի ընթացքում կայացված ակտերի բողոքարկումը**» վերտառությամբ 20-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն պարտապանը, պարտատերը (պարտատերերը)»:

Վերոնշյալ հոդվածը փոփոխվել է 2009 թվականի փետրվարի 5-ի ՀՕ-48-Ն օրենքով, խմբագրվել և փոփոխվել՝ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-13-Ն օրենքով, խմբագրվել՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-294-Ն օրենքով:

Գործի քննության առիթը «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊԸ-ի՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2024 թվականի մայիսի 31-ի ՍԴԱՈ-92 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը կասեցվել է՝ մինչև որոշման մեջ նշված կասեցման հիմքերը վերանալը: Սահմանադրական դատարանի 2025 թվականի մարտի 15-ի ՍԴԱՈ-38 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է: Սահմանադրական դատարանի 2025 թվականի մարտի 18-ի ՍԴԱՈ-39 աշխատակարգային որոշմամբ սույն գործի վարույթը մասամբ՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի մասերով, կարճվել է:

Ուսումնասիրելով դիմումը, Դիմողի և Պատասխանողի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով վիճարկվող և վերաբերելի օրինադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Գործի դատավարական նախապատմությունը

1.1. Արմեն Աթանեսյանը 2019 թվականի հոկտեմբերի 15-ին դիմում է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան (այսուհետև նաև՝ Դատարան)՝ «ԻՄՊԵՐԻԱԼ

ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջով:

1.2. Սնանկության դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), քննելով թիվ ՍնԴ/1731/04/19 սնանկության գործն ըստ Արմեն Աթանեսյանի դիմումի՝ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին, 2019 թվականի նոյեմբերի 14-ին վճռել է.

«Դիմումը բավարարել. «Իմպերիալ Պալաս Հոթել» սահմանափակ պարտասխանատվությամբ ընկերությանը ճանաչել սնանկ...»:

Սույն վճռով Դատարանը փաստել է.

«Տվյալ դեպքում Դատարանը հաստատել է համարում, որ Ընկերությունը Արմեն Աթանեսյանի նկատմամբ ունի գրավոր գործարքի՝ 31.05.2019 թ. կնքված փոխառության պայմանագրի վրա հիմնված 250.000 ԱՄՆ դոլարի պարտավորություն (...):

Դատարանն ապացուցված է համարում նաև այն, որ Ընկերության ունեցած վերը նշված պարտավորությունը կետանցված է 60 օրից ավելի ժամկետով, և այդ կետանցը շարունակվում է, քանի որ այդ պարտավորությունը մարելու վերաբերյալ որևէ ապացույց Դատարան չի ներկայացվել: Ընկերությունը Արմեն Աթանեսյանի նկատմամբ վճարային պարտավորություն ունենալու, այդ պարտավորության չափի և այն կետանցված լինելու վերաբերյալ որևէ առարկություն Դատարան չի ներկայացրել:

Այսպիսով, Դատարանն ապացուցված է համարում, որ Ընկերությունը Արմեն Աթանեսյանի նկատմամբ ունի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող, 60 օրից ավելի ժամկետով կետանցված անվիճելի վճարային պարտավորություն, որի կետանցը շարունակվում է:

Վերը նշվածից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված բոլոր անհրաժեշտ պայմանները՝ անձին սնանկ ճանաչելու համար, ուստի Ընկերությանը սնանկ ճանաչելու վերաբերյալ Արմեն Աթանեսյանի դիմումը ենթակա է բավարարման»:

Հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատերը (Արմեն Աթանեսյան) ու պարտապանը («ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերություն) հիշատակված վճիռը չեն բողոքարկել:

1.3. Դատարանը 2021 թվականի մարտի 25-ի որոշմամբ հաստատել է «Ֆլեշ» ՍՊԸ-ի պահանջը՝ 825.661 ՀՀ դրամի չափով, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետով սահմանված հերթում որպես չապահովված պահանջ:

1.4. «Արարատբանկ» ԲԲ ընկերությունը 2020 թվականին մարտի 5-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերության, Արմեն Աթանեսյանի, երրորդ անձ՝ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Արթուր Առուշանյանի՝ գործարքի կեղծ լինելը հաստատելու պահանջի վերաբերյալ:

1.5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով թիվ ԵԴ/8529/02/20 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ «Արարատբանկ» ԲԲ ընկերության ընդդեմ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերության, Արմեն Աթանեսյանի, երրորդ անձ՝ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Արթուր Առուշանյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանք կիրառելու, այն է՝ Արմեն Աթանեսյանի և «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊԸ-ի միջև 31.05.2019 թ. կնքված փոխառության պայմանագրի կեղծ լինելը հաստատելու պահանջի վերաբերյալ, 2021 թվականի սեպտեմբերի 1-ին վճռել է.

«1. Ըստ հայցի «Արարատբանկ» ԲԲ ընկերության ընդդեմ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերության, Արմեն Աթանեսյանի, երրորդ անձ՝ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Արթուր Առուշանյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանք կիրառելու, այն է՝ Արմեն Աթանեսյանի և «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊԸ-ի միջև 31.05.2019 թվականին կնքված փոխառության պայմանագրի կեղծ լինելը հաստատելու պահանջի վերաբերյալ հայցը բավարարել:

2. Կիրառել կեղծ լինելու հիմքով առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ և անվավեր ճանաչել Արմեն Աթանեսյանի և «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊԸ-ի միջև 31.05.2019 թվականին կնքված փոխառության պայմանագիրը»:

Վճիռը բողոքարկվել է վերաքննության և վճռաբեկության կարգով, թողնվել է անփոփոխ:

1.6. «Ֆլեշ» ՍՊ (հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատեր չհանդիսացող) ընկերությունը 2022 թվականի հուլիսի 19-ին Դատարանի 2019 թվականի նոյեմբերի 14-ի վճռի նոր հանգամանքի հիմքով վերանայման բողոք է ներկայացրել: Նոր հանգամանքի հիմքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ ըստ հայցի՝ «Արարատբանկ» ԲԲ ընկերության ընդդեմ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերության, Արմեն Աթանեսյանի, երրորդ անձ՝ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Արթուր Առուշանյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանք կիրառելու, այն է՝ Արմեն Աթանեսյանի և «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊԸ-ի միջև 31.05.2019 թ. կնքված փոխառության պայմանագրի կեղծ լինելը հաստատելու պահանջի վերաբերյալ թիվ ԵԴ/8529/02/20 քաղաքացիական գործով սույն որոշման 1.5-րդ կետում նշված վճիռն է:

1.7. Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, քննելով թիվ ՍնԴ/1731/04/19 սնանկության գործով ըստ Արմեն Աթանեսյանի դիմումի՝ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին, «Ֆլեշ» ՍՊ ընկերության կողմից նոր հանգամանքով ներկայացված՝ Դատարանի 14.11.2019 թ. վճռի վերանայման բողոքը, 2023 թվականի հունվարի 5-ին որոշել է. «1. Թիվ ՍնԴ/1731/04/19 սնանկության գործով ՀՀ Սնանկության դատարանի 14.11.2019 թվականի վճռի դեմ «Ֆլեշ» ՍՊԸ-ի ներկայացրած վերանայման բողոքը բավարարել. նշված վճիռը բեկանել և գործն ուղարկել նոր քննության»:

1.8. Վճռաբեկ դատարանը, քննելով ըստ Արմեն Աթանեսյանի դիմումի՝ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.01.2023 թ.

որոշման դեմ «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊ ընկերության բերած վճարել բողոքը քննության ընդունելու հարցը, 2023 թվականի սեպտեմբերի 20-ին որոշել է վճարել բողոքը վարույթ ընդունելը մերժել:

2. Դիմողի դիրքորոշումները

«ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Դիմող), ներկայացնելով թիվ ՍնԴ/1731/04/19 սնանկության և թիվ ԵԴ/8529/02/20 քաղաքացիական գործերի դատավարական նախապատմությունները, նշում է, որ կողմերը վստահել են օրինական ուժի մեջ մտած դատական ակտի օրինականությանը՝ ակնկալելով, որ դատական ակտով վրա հասնող հետևանքները (պարտավորությունների նկատմամբ հաշվարկվող տույժերի մասով) իրավաչափ են, և եթե անգամ ինչ-որ հանգամանքի ուժով բեկանվի սնանկ ճանաչելու վերաբերյալ վճիռը, ապա դրա հետևանքով պարտապանի ֆինանսական վիճակը չի կարող էլ ավելի վատթարանալ, քանի որ պարտապանը չի կարող կրել անօրինական դատական ակտի բացասական հետևանքները՝ դադարած պարտավորությունների վերականգնման տեսանկյունից:

Դիմողն ընդգծում է, որ վիճարկվող դրույթներում առկա օրենսդրական բացը, իրավական որոշակիության բացակայությունը, ըստ էության, իրավաբանական անձի համար անդառնալի և կործանիչ հետևանքներ են առաջացնում այն իմաստով, որ դադարած տույժերի վերականգնման և վերահաշվարկման արդյունքում կրկնապատկված պարտավորությունը թույլ չի տա պարտապանին ֆինանսապես առողջանալ, և պարտապանն իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը կորցնելու ակնհայտ վտանգի առջև կկանգնի:

Անդրադառնալով Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասին՝ Դիմողը նշում է, որ տվյալ դրույթը պետք է մեկնաբանել այնպես, որ պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճռի դեմ, բացի պարտապանից, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունի այն պարտատերը, որը պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դիմել է դատարան:

Դիմողը գտնում է, որ Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում է Սահմանադրության 79-րդ հոդվածին, Օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ

կետով նախատեսված իրավակարգավորմանը, Օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետին, 417-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետին:

Դիմողը նշում է. «Օրենսդիրը, տվյալ դեպքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասին տվել է Սահմանադրության 79-րդ հոդվածին չհամապատասխանող՝ ոչ որոշակի ձևակերպում, այսինքն բավարար չափով որոշակի չի նշվել մյուս պարտատերերի՝ այդ թվում՝ դիմող պարտատեր չհանդիսացող, վերջնական ցուցակում ընդգրկված պարտատերերի՝ սնանկ ճանաչելու վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունքի սահմանափակումը, ինչը հիմք է հանդիսացել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի տարընկալումների և սույն գործով դատարանների կողմից հակասող մեկնաբանությամբ կիրառությունների»:

Ըստ Դիմողի՝ քննարկվող դեպքում Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, քննելով և բավարարելով վերջնական ցուցակում ընդգրկված և նոր հանգամանքի հիմքով վերաքննիչ բողոք ներկայացրած պարտատիրոջ վերաքննիչ բողոքը, համարել է, որ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի ելքով շահագրգռված այլ անձինք կարող են համարվել բոլոր պարտատերերը, և վերջիններս՝ դեռևս պարտատեր հանդիսանալու իրավունքը ծագած չլինելու փուլում, կարող են օգտվել պարտապանին սնանկ ճանաչելու գործընթացում դատավարական իրավունքներից:

Դիմողը գտնում է, որ «(...) Պարտապանի պարտավորությունների դադարեցումը օրինական ուժի մեջ մտած սնանկ ճանաչելու վճռի հիմքով (տույժերի հաշվարկման մասով), այնուհետև դրանց վերականգնումը հակասահմանադրական է», քանի որ, եթե օրինակ, սնանկության վարույթի ավարտին մոտ ժամանակահատվածում վարույթում ներգրավվի որևէ նոր պարտատեր և բողոքարկի սնանկ ճանաչելու վերաբերյալ վճիռը, որն արդյունքում բեկանվի և ուղարկվի նոր քննության, իսկ սնանկության վարույթից անցած լինի հինգ և ավելի տարիներ, նույնիսկ նոր քննության փուլում սնանկ ճանաչվելու պարագայում պարտապանի համար տեղի են ունենալու անդառնալի հետևանքներ, քանի որ սնանկ ճանաչելու վերաբերյալ վճռի բեկանմամբ չեղարկվելու են մինչ այդ դադարեցված տույժերի հաշվարկումները, և եթե գործնականում նմանատիպ իրավիճակները բազմաթիվ

լինեն, որևէ պարտապան արդյունքում չի կարողանա ֆինանսապես առողջանալ՝ իրենից անկախ հանգամանքներում, ինչը բացասական հետևանքներ է առաջացնում թե՛ ընկերության, թե՛ երկրի տնտեսության համար:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ Պատասխանող) փաստում է, որ «(...) օրենսդիրը որևէ սահմանափակում չի նախատեսել առ այն, որ վերաքննիչ բողոք բերելու իրավունքը վերապահված է միայն այն պարտատիրոջը, ով սնանկության դիմում է ներկայացրել: Դա սուբյեկտիվ մեկնաբանություն է և չի բխում նորմում նշված կարգավորումից: Օրենսդիրը առանց որևէ այլ սահմանափակումների նշել է պարտատեր (պարտատերեր), հետևաբար ցանկացած այլ հատկանիշի կամ նախապայմանի սահմանումը մեկնաբանության արդյունք է»:

Պատասխանողն արձանագրում է, որ նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով գործի նորոգման ընթացակարգի նախատեսումը ոչ միայն չի կարող հակասել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքին, այլ, ընդհակառակը՝ նշված իրավունքի իրացման լրացուցիչ միջոց է այն անձանց համար, որոնց օրինական շահերը շոշափող վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք կասկածի տակ են դնում կայացված վճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Անդրադառնալով Դիմողի այն պնդմանը, «(...) համաձայն որի՝ պարտատիրոջ հանդեպ պարտապանի ունեցած պարտավորության դադարման դեպքում՝ դրա հիմքը հանդիսացող օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և այդպիսի դադարումը պետք է լինի վերջնական և որևէ կերպ ենթակա չլինի վերականգնման», Պատասխանողը գտնում է, որ նման մոտեցումն իմաստազրկում է ոչ միայն նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտը, այլև խաթարում է սնանկության գործով բոլոր պարտատերերի իրավունքների իրացումը:

Ըստ Պատասխանողի՝ բոլոր պարտատերերն ունեն իրավահավասար մասնակցություն սնանկության գործընթացին՝ անկախ այն հանգամանքից, թե որ պարտատերն է պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացրել, և

պետք է ապահովել պարտատերերի պահանջների արդար և հավասար բավարարումը: Հետևաբար՝ սնանկության վարույթի նպատակը միայն մեկ պարտատիրոջ (սնանկության դիմում ներկայացրած) սեփականության իրավունքի պաշտպանության ապահովումը չէ, այլ բոլոր պարտատերերի արդարացի հավասարակշռված շահերի պաշտպանությունն է, ինչպես նաև տարբեր շահագրգիռ կողմերի՝ ներառյալ պարտապանների շահերի պաշտպանությունը:

Հետևաբար՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով գործի նորոգման ընթացակարգի նախատեսումը չի կարող մեկնաբանվել որպես այլ անձանց սեփականության իրավունքի սահմանափակում նախատեսող կարգավորում:

Պատասխանողը գտնում է, որ առարկայագուրկ է Դիմողի այն պնդումը, ըստ որի՝ սնանկ ճանաչելու վերաբերյալ վճռի վերանայման արդյունքում խախտվում է իր նկատմամբ կայացված դատական ակտի կանխատեսելիությունն ու անհերքելիությունը, քանի որ երբ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով գործարքն անվավեր է ճանաչվում առոչնչության հիմքով, ապա այդ գործարքի կողմի համար բոլորովին անկանխատեսելի չէ, որ այն դատական ակտը, որի հիմքում դրվել է կեղծ գործարքը, կարող է բեկանվել և գործն ուղարկվել նոր քննության:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Պատասխանողը խնդրում է՝ սույն գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, որի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին դատարանի վճռի դեմ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման բողոք բերելու իրավունք վերապահվում է նաև հարկադրված սնանկության

վերաբերյալ դիմում չներկայացրած պարտատիրոջը, համահունչ է սնանկության վարույթով որպես պարտապանի կարգավիճակ ունեցող անձի՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ հանդիսացող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերջնականության (*res judicata*) սկզբունքի, ինչպես նաև հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ապահովման՝ Սահմանադրության 75-րդ հոդվածով նախատեսված պահանջին՝ Սահմանադրության 59 և 60-րդ հոդվածներով ամրագրված՝ տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ազատության և սեփականության իրավունքների պաշտպանության լույսի ներքո՝ հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկությունները:

Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը նշում է, որ վերոնշյալ հարցադրմանն անդրադառնալու է բացառապես պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում) սնանկության վարույթի շրջանակներում:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության՝ «Տնտեսական կարգը» վերտառությամբ 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցության և սոցիալական արդարության երաշխավորմանը: Սույն սահմանադրական կարգավորումն իր տրամաբանական շարունակությունն է ստացել Սահմանադրության՝ «Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը» վերտառությամբ 59-րդ հոդվածում.

«1. Յուրաքանչյուր ոք ունի փնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. *Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:*

3. *Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են»:*

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է տնտեսական գործունեության ազատության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը: Այսպես.

Սահմանադրական դատարանի 1999 թվականի հունվարի 27-ի ՍԴՈ-152 որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Ազատ տնտեսական մրցակցության սկզբունքն իր հերթին բխում է տնտեսական ազատության և հավասարության սկզբունքներից և նշանակում է շուկայական տնտեսության ներսում բոլոր տնտեսավարող սուբյեկտների հավասարություն, պետության կողմից նրանց համար հավասար պայմանների և հնարավորությունների ապահովում»:

Այլ ալ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցությունը պետության զարգացման կարևոր նախապայմաններն ու անկյունաքարերն են՝ հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուրին՝ ազատ, բարեխիղճ, հավասար և մրցակցային պայմաններում իրականացնելու տնտեսական գործունեություն» (2023 թվականի ապրիլի 25-ի ՍԴՈ-1685 որոշում):

Սահմանադրական դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-1756 որոշմամբ նշել է.

«(...) տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական գործունեությունն իրավական առումով քաղաքացիաիրավական հարաբերությունների շղթա է, որը կառուցվում է տնտեսավարող սուբյեկտների միջև, ի թիվս այլնի, փոխադարձաբար պարտավորական իրավահարաբերություններ հաստատելու միջոցով, որոնց բարեխիղճ կենսագործումը պետության տնտեսական զարգացման անվերապահ առհավաքյան է:

Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական գործունեության ազատությունը քաղաքացիաիրավական հարաբերությունների համատեքստում ունի առանձնահատուկ կարևորություն: Այսպես՝ ի երաշխավորումն նշված սահմանադրական իրավունքի՝ պետությունն օրենսդրորեն ամրագրում է.

1) քաղաքացիաիրավական, այդ թվում՝ պարտավորական հարաբերությունների շրջանակներում կամքի ինքնավարության սկզբունքը, որը, ի թիվս այլնի, ենթադրում է, որ տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտները պարտավորական հարաբերությունների մեջ են մտնում իրենց կամքով և ի շահ իրենց,

2) պայմանագրի ազատության սկզբունքը, որը, ի թիվս այլնի, ենթադրում է, որ տնտեսավարող սուբյեկտներն ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման,

3) մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքը, որը, ի թիվս այլնի, պաշտպանում է տնտեսավարողներին պետության անհարկի միջամտությունից՝ կաշկանդելով պետությանը նշված ոլորտում տնտեսավարողների իրավունքներին միջամտել սահմանադրորեն ամրագրված բացառիկ հիմքերով,

4) քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության սկզբունքը, որը, ի թիվս այլնի, ուղղակիորեն փոխկապակցված է պարտավորական հարաբերությունների կայունության հետ և ուղղված է պարտավորական հարաբերությունների դադարման հիմքերի բացակայության պարագայում տվյալ հարաբերությունների պահպանմանը,

5) պարտավորական հարաբերությունների շրջանակներում խախտված իրավունքների պաշտպանության, այդ թվում՝ դատական պաշտպանության սկզբունքը:

Վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ի երաշխավորումն Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական գործունեության ազատության՝ առանցքային կարևորություն է ներկայացնում ոչ միայն օրենսդրա-

կան, այլ նաև իրավակիրառ մակարդակում **տնտեսական գործունեության իրականացման իրավական հիմքերի կայունության ապահովումը**, մասնավորապես՝ տնտեսվարող սուբյեկտների համար իրենց գործունեության կայունության և որոշակիության համար այնպիսի իրավական հարթության ապահովումը, որի շրջանակներում պարտավորական հարաբերությունները կդադարեն օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հստակ հիմքերով, որոնք բավարար որոշակի և կանխատեսելի կլինեն պարտավորական հարաբերությունների սուբյեկտների համար»:

Բարձր դատարանի վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ տնտեսական հարաբերությունների կայունությունն ու կանխատեսելիությունը ժամանակակից շուկայական տնտեսության արդյունավետ գործառնության համար առանցքային նախապայմաններ են: Այս հարաբերությունների իրավական պաշտպանությունը, ի շարս այլ կառուցակարգերի, երաշխավորվում է նաև սնանկության ինստիտուտի միջոցով, ինչը ենթադրում է, որ և՛ օրենսդիրը՝ սնանկության ընթացակարգերի վերաբերյալ համապատասխան իրավակարգավորումներ սահմանելիս, և՛ իրավակիրառը՝ դրանք կյանքի կոչելիս պետք է ի միտն ունենան յուրաքանչյուրի, այդ թվում՝ սնանկության վարույթում պարտապանի կարգավիճակ ունեցող անձի՝ Սահմանադրության 59-րդ հոդվածով երաշխավորված սահմանադրական իրավունքի ապահովման անհրաժեշտությունը՝ նկատի ունենալով սնանկության վարույթի շրջանակներում պարտապանի առանձին իրավունքների սահմանափակում ենթադրող ընթացակարգերը, որոնք, ի թիվս այլնի, առանձին դեպքերում հանգեցնում են նաև պարտապանի լուծարման և գործունեության կասեցման:

5.2. Սահմանադրության՝ «Սեփականության երաշխավորումը» վերտառությամբ 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը»:

Սահմանադրության՝ «Սեփականության իրավունքը» վերտառությամբ 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով ամրագրված է.

«1. Յուրաքանչյուր որ ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ փիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

(...)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-92, ՍԴՈ-630, ՍԴՈ-649, ՍԴՈ-650, ՍԴՈ-667, ՍԴՈ-669, ՍԴՈ-735, ՍԴՈ-815, ՍԴՈ-901, ՍԴՈ-903, ՍԴՈ-1009, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1073, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1189, ՍԴՈ-1203, ՍԴՈ-1210 և այլն) անդրադարձել է սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, այդ իրավունքի պաշտպանության հնարավոր սահմանափակման խնդիրներին՝ իրավական դիրքորոշումներ արտահայտելով սեփականության իրավունքի էության, այդ իրավունքի սահմանափակման, դադարման հետ կապված իրավակարգավորումների սահմանադրականության վերաբերյալ՝ կարևորելով այդ բնագավառում սահմանադրական կարգի սկզբունքներից բխող իրավական միջոցների գործադրման անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 30-ի ՍԴՈ-1432 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ *«Սեփականության իրավունքը որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման բնութագրիչ, միաժամանակ նաև՝ որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգ ունի սահմանադրաիրավական կարևոր նշանակություն»:*

Սահմանադրական դատարանը վերոնշյալ որոշմամբ նաև արձանագրել է, որ *«(...) ինչպես միջազգային իրավական, այնպես էլ սահմանադրական մակարդակներով հաստատագրված է հանրային իշխանության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխիքներ, մասնավորապես.*

առաջին՝ առանց որևէ խտրականության ճանաչել և պաշտպանել սեփականության իրավունքն անկախ դրա դրսևորման ձևերի,

երկրորդ՝ երաշխավորել սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և փնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար,

երրորդ՝ Սահմանադրությամբ կանխորոշված նպատակով սահմանել սեփականության իրավունքի իրացման ազատության օրենքով թույլատրելի շրջանակը,

չորրորդ՝ երաշխավորել օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով անձին սեփականությունից զրկելու, ինչպես նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականությունը հարկադիր օտարելու և նախնական ու համարժեք փոխհատուցում ապահովելու վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջների կատարումը»:

Վերահաստատելով և զարգացնելով սեփականության իրավունքի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև դիտարկելով դրանք հայցային վաղեմության ինստիտուտի համատեքստում՝ Սահմանադրական դատարանը 2021 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-1611 որոշմամբ փաստել է. «(...) սեփականության իրավունքի հետ առնչակցություն ունեցող ցանկացած օրենսդրական կարգավորում, դրա մեկնաբանություն և կիրառում պետք է համապատասխանեն նշյալ իրավունքի առնչությամբ Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումներին և Սահմանադրական դատարանի՝ ներկայացրած իրավական դիրքորոշումներին, մասնավորապես՝ դրանք պետք է երաշխավորեն սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և փնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար, պետք է երաշխավորեն օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով անձին սեփականությունից զրկելու վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջների կատարումը»:

րումը, ինչպես նաև երաշխավորեն սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանությունը»:

Բացի դրանից, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) նշում է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (“Trgo v. Croatia”, Application no. 35298/04, 11.06.2009, Final 11.09.2009, § 44):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է նաև, որ «գույքը» կարող է լինել «գոյություն ունեցող սեփականությունը» կամ «ակտիվները», ներառյալ՝ պահանջները, որոնց առնչությամբ դիմումատուն կարող է վիճարկել, որ առնվազն ունի սեփականության իրավունքից անարգել օգտվելու «իրավաչափ ակնկալիք» (“J. A. Pye (Oxford) Ltd and J. A. Pye (Oxford) Land Ltd v. United Kingdom”, Application no. 44302/02, 30.08.2007, § 61): «Ակնկալիքը» համարվում է իրավաչափ, եթե այն հիմնված է օրենսդրական դրույթի կամ քննարկվող գույքի վերաբերյալ իրավական ակտի վրա (“Saghinadze and others v. Georgia”, Application no. 18768/05, 27.05.2010, Final 27.08.2010, § 103):

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ազատությունն ուղղակիորեն փոխկապակցված է սեփականության իրավունքի հետ, ըստ այդմ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը ոչ միայն ուղղված է շահույթ (գույք) ստանալուն, այլ նաև իրականացվում է, ի թիվս այլնի, սեփականատիրոջ կողմից իր գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման եղանակով:

Սահմանադրական դատարանը 2023 թվականի ապրիլի 25-ի ՍԴՈ-1685 որոշմամբ արձանագրել է. «Տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման ու սեփականության իրավունքի փոխկապակցվածությունը դրսևորվում է նրանում, որ **ազատ տնտեսական գործունեության և տնտեսական մրցակցության արդյունքում սեփականության ծավալն ավե-**

լացնելու նոր նախադրյալներ են ստեղծվում, ինչն, իր հերթին, իրական հնարավորություն է ընձեռում նաև ազատ տնտեսական գործունեության շրջանակն ընդլայնելու համար»:

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ տնտեսական գործունեության շրջանակներում պարտավորական հարաբերությունների հաստատման նպատակը, ի թիվս այլնի, հանգում է պարտավորական հարաբերությունների մասնակիցների՝ սեփականություն ձեռք բերելու օրինական ակնկալիքի ձևավորմանը, և այդ հարաբերությունների դադարումն ուղեկցվում է սեփականություն ձեռք բերելու օրինական ակնկալիքի վերացմամբ՝ առանձնակի կարևորելով ինչպես օրենսդրորեն, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում պարտավորությունների դադարման ինստիտուտի համատեքստում սեփականության իրավունքի ապահովման երաշխավորումը» (2024 թվականի հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-1756 որոշում):

5.3. Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ սնանկության ինստիտուտը տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված պետության միջամտության առանձնահատուկ դրսևորում է, որը, մի կողմից՝ կոչված է առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները՝ վարույթի շրջանակներում հավաքագրված միջոցներն արդար բաշխելով վերջիններիս միջև, մյուս կողմից՝ օրենսդրական կարգավորումների ներդրման միջոցով փրկել գոյատևման ընդունակ տնտեսվարող սուբյեկտներին (2021 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-1609 որոշում):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սնանկության ինստիտուտի շրջանակներում պետությունը, ի շարս այլնի, նաև տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովման նկատառումներից ելնելով, մասնավոր իրավահարաբերություններին ոչ բնորոշ գործիքակազմի կիրառմամբ, միջամտում է տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության ոլորտին՝ ուղղակիորեն սահմանափակելով տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաև սեփականության իրավունքները, որպիսի պայմաններում, հատկապես, կարևորվում է օրենսդրական մակարդակում սնանկության ինստիտուտի վերաբերյալ պատշաճ, որոշակի և

արդյունավետ կառուցակարգեր սահմանելու և դրանք կիրառելու հանրային իշխանության համապատասխան մարմինների պոզիտիվ պարտականությունը, որի պարագայում, ի թիվս այլնի, կերաշխավորվեն խնդրո առարկա գործընթացի կայունությունն ու կանխատեսելիությունը, ինչպես նաև դրա մասնակիցների իրավունքների հավասարակշռված պաշտպանությունը:

Սահմանադրական դատարանը, իր որոշումներում անդրադառնալով **սնանկության ինստիտուտի էությանը**, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- սնանկության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումը յուրաքանչյուր պետության տնտեսության կայունության ապահովման երաշխիքներից է (2008 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ- 735 որոշում),

- սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը և **միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը** (2008 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-735 որոշում),

- «Սնանկության մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթների վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանք խարսխվում են այն տրամաբանության վրա, համաձայն որի՝ սնանկության հիմքն անվճարունակությունն է: Այդ մասին է, մասնավորապես, վկայում օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված դրույթը, որը և՛ կամավոր սնանկության, և՛ հարկադրված սնանկության դեպքում որպես սնանկության հիմք ամրագրում է պարտապանի անվճարունակության փաստը (2008 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-735 որոշում),

- սնանկության գործընթացի **նպատակն է երաշխիքներ ստեղծել մի կողմից՝ պարտատերերի պահանջները համամասնորեն բավարարելու, մյուս կողմից՝ հնարավոր դեպքերում պարտապանի գույքային դրությունը կայունացնելու (պարտապանի վճարունակության վերականգնումը)** և նրա տնտեսական գործու-

նեության շարունակականությունն ապահովելու համար (2021 թվականի հունվարի 26-ի ՍԴՈ-1572 որոշում)

- «(...) պարտապանին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է, որպիսի պայմաններում **սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի գործողությունների շրջանակն իրավաչափորեն սահմանափակվում է՝** նպատակ ունենալով ապահովելու պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունը: Հետևաբար՝ անվճարունակ պարտապանի սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ պարտապանի գործողություններն իրականացնում է սնանկության գործով կառավարիչը՝ հանդես գալով որպես պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովող ոչ շահագրգիռ անձ՝ միաժամանակ հաշվի առնելով կողմերից յուրաքանչյուրի շահերը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի իրավակարգավորումը նպատակ ունի ապահովելու իրավաչափ հավասարակշռություն մի կողմից պարտապանի, մյուս կողմից՝ պարտատերերի շահերի պաշտպանության համար» (2021 թվականի հունվարի 26-ի ՍԴՈ-1572 որոշում):

Սահմանադրական դատարանը 2021 թվականի սեպտեմբերի 23-ի ՍԴՈ-1610 որոշմամբ ընդգծել է, որ սնանկության ինստիտուտի առջև դրված հիմնարար նպատակներից մեկը **պարտատերերի և պարտապանի շահերի հավասարակշռված պաշտպանությունն է:** Մասնավորապես՝ տվյալ որոշմամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «*Սնանկության մասին*» ՀՀ օրենքի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սնանկության վարույթը **միմյանց հաջորդող բազմափուլ համակարգ է,** որի կառուցվածքային տարր հանդիսացող յուրաքանչյուր փուլի առջև օրենսդիրը դրել է կոնկրետ խնդիրներ (սնանկության դիմումի ընդունելիության փուլում՝ ստուգել դիմումի ձևին, բովանդակությանը, դատարան ներկայացվող փաստաթղթերին առաջադրված օրենսդրական պահանջներին համապատասխանությունը, սնանկ ճանաչելու հարցի լուծման փուլում՝ սնանկության հիմքերի և հարկանիշների առկայությունը կամ բացակայությունը և այլն), որը բխում է

սնանկության վարույթի համընդհանուր նպատակից, այն է՝ ապահովել պարտավորությունների պահանջների բավարարումը՝ երաշխավորելով պարտավորությունների և պարտապանի իրավունքների պաշտպանության ողջամիտ հավասարակշռությունը»:

Վերահաստատելով վերոհիշյալ դիրքորոշումը և ի հավելումն դրա՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սոցիալական շուկայական տնտեսության պայմաններում պարտավորությունների և պարտապանի իրավունքների պաշտպանության ողջամիտ հավասարակշռությանն ուղղված գործողությունները և դրանց ապահովմանը միտված օրենսդրական կարգավորումներն իրապես հավասարակշռված կդիտարկվեն այն պարագայում, երբ պարտատերերի պահանջների բավարարումը կհավասարակշռվի նաև **Ֆինանսական դժվարության մեջ գտնվող ընկերության առողջացման օրինական ու ակնկալվող շահով:**

Վերոգրյալ դիրքորոշումներից ելնելով և վիճարկվող դրույթի սահմանադրականության սուուգման համատեքստում ի մի բերելով դրանք՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է.

- սնանկության ինստիտուտը տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված պետության միջամտության առանձնահատուկ դրսևորում է, որն ուղղակիորեն ներազդում է տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության ոլորտային շրջանակի վրա,

- դրա գործարկմամբ ուղղակիորեն սահմանափակվում է անձի՝ տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաև սեփականության իրավունքը,

- պետության խնդիրն է ապահովել, մի կողմից, պարտատերերի պահանջների առավելագույնս բավարարումը՝ սնանկության վարույթի շրջանակներում հավաքագրված միջոցները վերջիններիս միջև արդար բաշխելու միջոցով, մյուս կողմից՝ գոյատևման ընդունակ տնտեսվարող սուբյեկտների կենսունակության վերականգնումը և բնականոն տնտեսավարման հուն վերադարձը:

Ըստ այդմ՝ նկատի ունենալով սնանկության գործընթացի պատշաճ կազմակերպման նշանակությունը պետության տնտեսական հիմքի կայունության համար և սնանկության հետ կապված հարաբերություններում պետության միջամտության

ինտենսիվությունը, ինչպես նաև ելնելով սնանկության վարույթով հետապնդվող նպատակներից ու դրանց առանձնահատկություններից՝ հատկապես կարևորվում է պետության համարժեք վարքագիծը՝ օրենսդրորեն կանոնակարգված որակյալ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ստեղծման ու դրանց համահունչ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման ոլորտում, որոնք անհրաժեշտ են սնանկության վարույթի մասնակիցների իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար:

Վերջինս ենթադրում է այնպիսի օրենսդրական կարգավորումների առկայություն, որոնց պարագայում երաշխավորված կլինի սնանկության վարույթի մասնակիցների իրավունքների հավասարակշռված պաշտպանությունը, մասնավորապես՝ պարտատերերի իրավունքների պաշտպանությունը և նրանց խախտված իրավունքների վերականգումը՝ մի կողմից, և պարտապանների առողջացման հնարավորությունը՝ մյուս կողմից:

Բացի դրանից, օրենսդրական կարգավորումները պետք է ապահովեն սնանկության գործընթացի կայունությունը, որոշակիությունն ու կանխատեսելիությունը, ուղղված լինեն թե՛ խնդրո առարկա վարույթով հետապնդվող ընդհանուր խնդիրների և թե՛ կոնկրետ պարտավորական հարաբերությունների համալիր կարգավորմանը՝ հաստատուն պահելով ձեռնարկատիրական գործունեության անխոչընդոտ իրականացման և զարգացման համար անհրաժեշտ բարենպաստ միջավայրն ու պայմանները:

5.3.1. Սահմանադրական դատարանը փաստում է, որ սնանկության վարույթը մեկ միասնական, բազմափուլ և համապարփակ գործընթաց է՝ դատավարության իրեն բնորոշ մասնակիցների կազմով, նրանց դատավարական իրավունքների ու պարտականությունների շրջանակով, որն սկսվում է պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացնելուց (հարկադրված կամ կամավոր) և, որպես կանոն, եզրափակվում՝ սնանկության գործն ավարտվելու վերաբերյալ վճռով՝ առանձին դեպքերում հանգուցալուծվելով պարտապանի լուծարմամբ (իրավաբանական անձի պարագայում) կամ ֆինանսապես առողջացմամբ:

Մասնավորապես՝ ինչպես արդեն նշվեց՝ սնանկության ինստիտուտի շրջանակներում նախաձեռնված վարույթով պետությունը, տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովման նկատառումներից ելնելով, մասնավոր իրավահարաբերություններին ոչ բնորոշ գործիքակազմի կիրառմամբ միջամտում է տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության ոլորտին: Նախորդիվ նշված շահով պայմանավորված՝ սնանկության վարույթի շրջանակներում տեղի է ունենում տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, սեփականության իրավունքների և դրանց հետ կապված ընթացակարգային, մասնավորապես՝ դատական պաշտպանության իրավունքի ծավալի, ձևի ու բովանդակության էական փոխակերպում, ընդ որում՝ թե՛ պարտապանների և թե՛ պարտատիրոջ համար: Այս առումով վճռորոշ դերակատարում է վերապահվում սնանկության գործով կառավարիչներին (ժամանակավոր կառավարիչներին) և պետությանը՝ ի դեմս սնանկության գործեր քննող դատարանների:

Օրինակ՝ Օրենքի ուսումնասիրությունից հետևում է, որ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ մինչև նրա վերաբերյալ լուծարելու մասին որոշում ընդունելը, պարտապանի ղեկավարը գործում է կառավարչի համաձայնությամբ և նրա հսկողության ներքո: Պարտապանի ղեկավարին արգելվում է պարտապանի գույքը **տնօրինել կամ պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող ցանկացած գործողություն կատարել՝ առանց կառավարչի թույլտվության:** Պարտապանին պատկանող գույքի տնօրինումը նրա լուծարման մասին որոշում կայացնելուց հետո իրականացնում է կառավարիչը և այլն:

Բացի դրանից, Օրենքը նախատեսում է պարտատերերի պահանջների բավարարման (ներառյալ պարտապանի դեմ արդեն իսկ իրականացվող գործողությունների) սառեցման ինստիտուտը (մորատորիումը), որի նպատակը, վերջին հաշվով, պարտապանի գույքային դրության կառավարելիության ու կայունության ապահովումն է, մասնավորապես, որպեսզի թույլ չտրվի պարտապանի գույքի կազմի էական նվազեցում, այդ թվում նաև՝ պարտատերերի պահանջների արդարացի բավարարման հեռանկարով, միևնույն ժամանակ պարտապանի վճարունակության

վերականգնման և վերջինիս ֆինանսական առողջացման նախադրյալների ձևավորման առումով: Այլ կերպ՝ դրա կիրառումն ուղղված է ինչպես պարտապանի, այնպես էլ պարտատերերի շահերի պաշտպանությանը, և որն սկսվում է համապատասխան վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո և շարունակվում մինչև տվյալ սնանկության գործի ավարտը:

Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի մշակած «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցի համաձայն՝ լուծարման և առողջացման վարույթների ընթացքում մորատորիումի գործողությունը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ և նշանակություն՝ պայմանավորված հետապնդվող նպատակներով: Եթե լուծարման վարույթի նպատակն է պարտապանի գույքի իրացման միջոցով պարտատերերի պահանջների հնարավորինս արագ բավարարումը, որի դեպքում մորատորիումը կարող է ապահովել լուծարման վարույթի արդար և կանոնավոր կառավարումը, լուծարվող ակտիվների արժեքն առավելագույնի հասցնելը, ապա ֆինանսական առողջացման վարույթում մորատորիումի կիրառումը հեշտացնում է բիզնեսի շարունակական գործունեությունը և հնարավորություն է տալիս պարտապանին պատշաճ կազմակերպել իր գործերը: Երկու դեպքում էլ մորատորիումի կիրառումը թույլ է տալիս նաև սնանկության կառավարչին գնահատել պարտապանի դրությունը՝ մեծացնելով պարտապանի և պարտատերերի շահերին չհակասող առավելագույն արդյունքի հասնելու հնարավորությունը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ֆինանսական առողջացման վարույթի նպատակը՝ այդ փուլում մորատորիումի ազդեցությունն ավելի մեծ է և, հետևաբար՝ ավելի կարևոր, քան լուծարման ժամանակ, և կարող է կարևոր խթան հանդիսանալ պարտապաններին խրախուսելու ֆինանսական առողջացման վարույթ սկսելու համար¹:

5.3.2. Ինչպես նշվեց՝ սնանկության վարույթը, մեկ միասնական և համապարփակ գործընթաց լինելով հանդերձ, նաև բազմափուլ գործընթաց է: «Սնանկության գործ» հասկացության իմաստի բացահայտման համատեքստում Սահմանադրական դատարանը 2011 թվականի հունվարի 11-ի ՍԴՌ-932 որոշմամբ նշել է, որ

¹ տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf

նշված հասկացությունը չի սահմանափակվում միայն պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթով և **ներառում է այն բոլոր վեճերի լուծմանն ուղղված դատական վարույթները, որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի քննության ընթացքում կամ առնչվում են պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի բավարարման իրավական հետևանքներին:** Այլ կերպ՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված դատական գործը՝ որպես սնանկության գործ, ի տարբերություն այլ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող գործերի, չի ավարտվում տվյալ վարույթով կայացված դատական ակտով և կարող է բաղկացած լինել մի քանի առանձին վարույթներից, որոնք, սակայն, չեն հանդիսանում առանձին գործեր, այլ ներառվում են տվյալ իրավասուբյեկտի սնանկության վերաբերյալ միասնական դատական գործում:

Այս առումով, ինչպես հետևում է Օրենքի կարգավորումներից՝ «Սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, **քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝** որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր): Սույն մասով սահմանված՝ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճը ենթակա է քննության սնանկության դատարանում որպես առանձին քաղաքացիական գործ՝ անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից» (Օրենքի 4-րդ հոդված, մաս 3):

5.3.4. Օրենքի համակարգային ուսումնասիրությունը Սահմանադրական դատարանին թույլ է տալիս փաստել, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին

դիմումի քննության փուլում սնանկության վարույթի գործով մասնակիցներն են **պարտապանը և հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատերը (պարտատերերը):**

Սնանկության վարույթի կանխատեսելիության և իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքի համատեքստում հաշվի առնելով նաև սնանկության վարույթի առանձնահատկությունները, այդ թվում՝ *դրանում ներգրավված սուբյեկտների բազմաթվությունը, վերջիններիս՝ սնանկության վարույթի ելքով շահագրգռվածության բնույթը՝* Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սնանկության գործով հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատեր չհանդիսացող (հավանական/հնարավոր) պարտատերը, պարտապանին սնանկ ճանաչելու հարցի քննության և համապատասխան վճռի կայացման փուլում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի ուժով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի **հանդիսանում գործին մասնակցող անձ և նման դատավարական կարգավիճակ կարող է ստանալ իր պահանջի՝ դատարանի համապատասխան որոշմամբ հաստատվելու, պարտապանի պարտատերերի վերջնական ցուցակում ընդգրկվելու դեպքում:**

Ընդ որում՝ այս գործընթացի շրջանակներում պարտապանին սնանկ ճանաչելու մասին ի գիտություն հասարակության տրված հայտարարության հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում պարտատերերը, այդ թվում՝ ապահովված պարտատերերը, բացառությամբ այն դեպքի, երբ նրանք դուրս են եկել սնանկության վարույթից, դատարան են ներկայացնում իրենց պահանջները, որոնց հիման վրա դատարանը կայացնում է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշում՝ դրանում ներառելով պարտատիրոջը, նրա պահանջի չափը և բավարարման հերթը (Օրենքի 46-րդ հոդված): Այլ կերպ՝ հնարավոր մյուս պարտատերերը (հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում չներկայացրած) սնանկության վարույթում **ձեռք են բերում պարտատիրոջ (դատավարության մասնակցի) կարգավիճակ** պարտապանի նկատմամբ պահանջ ներկայացնելու եղանակով՝ պարտատերերի պահանջների վերջնական ցուցակում ընդգրկվելով (Օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մաս, 46-րդ հոդված)՝ այդ պահից ձեռք բերելով

սնանկության վարույթի շրջանակներում հավաքագրված դրամական միջոցներն իրենց պահանջներին համամասնորեն ստանալու իրավական հնարավորություն՝ ի թիվս այլնի օժտվելով նաև սնանկության վարույթի տարբեր փուլերում կայացվող դատական ակտերը բողոքարկելու իրավունքով:

Սահմանադրական դատարանը նկատում է, որ դատական պրակտիկան ևս այդ տրամաբանությամբ է զարգացել:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը թիվ ՏԴ1/0011/04/12 քաղաքացիական գործի շրջանակներում 2013 թվականի մայիսի 24-ին կայացրած որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «...սնանկության վարույթի ընթացքում առաջացող հարաբերությունների իրավակարգավորումը ենթադրում է այնպիսի կառուցակարգ, որն ուղղված է **բոլոր պարտավորների պահանջների համաչափ բավարարմանը**: Անկախ այն հանգամանքից՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը որ պարտավորներն է ներկայացրել, մնացած բոլոր պարտավորները պարտապանի գույքի հաշվին կարող են ստանալ հավասարաչափ բավարարում՝ սնանկության մասին հայտարարությունից մեկ ամիս հետո իրենց պահանջները դատարան ներկայացնելով: Սնանկ ճանաչելու դիմումի վարույթի քննության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ վարույթի այս փուլում դատարանը քննում է պարտապանի դեմ դիմում ներկայացրած պարտավորիչը պահանջը՝ անկախ այն հանգամանքից՝ առկա են արդյոք նույն պարտապանի նկատմամբ այլ պարտավորներ, թե ոչ: **Միայն սնանկության հիմքերի առկայության դեպքում և սնանկ ճանաչելու վճիռ կայացնելուց հետո վարույթին ներգրավվում են սնանկ ճանաչված անձի մյուս պարտավորները**: Նման կարգավորվածությունը մի կողմից ապահովում է դիմումի քննության արագությունը և արդյունավետությունը, քանի որ դատարանը չի քննում բոլոր հնարավոր պարտավորների պահանջները և չի անդրադառնում դրանցից յուրաքանչյուրի հիմնավորվածությանը, իսկ մյուս կողմից երաշխավորում է բոլոր հնարավոր պարտավորների իրավունքների (պահանջի իրավունքի) պաշտպանությունը՝ նրանց հնարավորություն տալով գրանցելու իրենց պահանջները և այդ կերպ ներգրավվելու սնանկության վարույթին»:

Ողջ վերագրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկադրված սնանկության դիմումով պարտապանին սնանկ ճանաչելու կամ խնդրո առարկա դիմումը մերժելու վերաբերյալ վճռի հասցեատերերը՝ պարտապանն ու հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատերն (պարտատերերն) են, իսկ սնանկ ճանաչված պարտապանի մյուս ենթադրյալ պարտատերերը սնանկության վարույթին ներգրավվում են **պարտապանին սնանկ ճանաչելուն հաջորդող համապատասխան փուլում՝ վերջիններիս կողմից ներկայացված պահանջները դատարանի համապատասխան որոշմամբ հաստատվելուց հետո**, հետևաբար՝ սնանկության վարույթի հիշատակված առանձնահատկությամբ պայմանավորված՝ տվյալ անձինք, խնդրո առարկա փուլում չունենալով գործին մասնակցող անձի կարգավիճակ, այնուամենայնիվ, չեն զրկվում սնանկության վարույթի այդ փուլին հաջորդող համապատասխան այլ փուլերում ներգրավվելու և **իրենց պահանջները ներկայացնելու և հաստատվելու կամ չհաստատվելու, ինչպես նաև իրենց իրավունքներին և օրինական շահերին առնչվող և այդ փուլերում կայացվող դատական ակտերը բողոքարկելու իրավունքից**:

Ավելին, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սնանկության վարույթի շրջանակներում հավաքագրված միջոցների հաշվին բավարարում ստանալու առումով հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատերը որևէ առավելություն չունի մյուս պարտատերերի համեմատությամբ զուտ այն փաստի ուժով, որ սնանկության վարույթը հարուցվել և սնանկ ճանաչելու մասին վճիռը կայացվել է իր դիմումի հիման վրա (այս առումով կարևորվում են պարտատերի կողմից ներկայացված պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը):

Սահմանադրական դատարանը փաստում է, որ թե՛ հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատերը, թե՛ մյուս պարտատերերը (հավանական) սնանկության գործով պահանջների ներկայացման և հաստատման փուլում Օրենքի 46-րդ հոդվածի ուժով պարտավոր են դատարան ներկայացված պահանջի շրջանակներում հստակ նշել այն պարտավորությունը, որից բխում է պահանջը, ինչպես նաև դրա կատարման ժամկետը, պահանջի չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը՝

համապատասխան հաշվարկներով, ինչպես նաև պահանջը հիմնավորող հանգամանքները: Այս առումով Օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասը լուրջ հարկադրված սնանկության դիմում ներկայացրած պարտատիրոջը հնարավորություն է ընձեռում միջնորդելու դատարանին՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո դիմումը դիտարկել նաև որպես պահանջ, եթե դիմումը համապատասխանում է նաև Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին:

Ասվածն ամենևին չի ենթադրում, որ պահանջների քննության շրջանակներում դատարանը չի անդրադառնալու ի շարս այլ պահանջների, նաև խնդրո առարկա պարտատիրոջ կողմից ներկայացված պահանջի օրինականությանը, չափին, առաջնահերթությանը, ապահովվածությանը:

Հետազոտության առարկա դարձնելով Օրենքի 46-րդ հոդվածի կարգավորումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում (դատարանի կողմից թերությունների վերացման համար ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ այդ ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում) պահանջների նախնական ցուցակը կառավարիչը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին և հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում:

Այս համատեքստում Սահմանադրական դատարանը կարևորում է հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, ***նախնական ցուցակի (դրանում ներկայացված կոնկրետ պահանջի) դեմ գրավոր առարկություններ ներկայացնելու՝ օրենսդրի կողմից կառավարչին, պարտապանին և պարտատերերին ընձեռված իրավական հնարավորությունը***, ինչը գործունե երաշխիք է սնանկության վարույթի սույն մասնակիցների իրավունքների հավասարակշռված երաշխավորման համար: Համապատասխան առարկություն ներկայացվելու դեպքում դատարանը առարկությունն ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին (Օրենքի 46-րդ հոդվածի 6 և 8-րդ մասեր):

Նման կարգավորումը բխում է սնանկության վարույթով հետապնդվող նպատակներից ու խնդիրներից, և այս առումով, *եթե նույնիսկ հարկադրված սնանկության դիմում ներկայացրած պարտատերը պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումը վերջինիս պահանջի մասով չի ընդգրկվում պահանջների վերջնական ցուցակում (պահանջի գրանցումը մերժվում է), կամ նման վերջնարդյունքի հանգում է խնդրո առարկա դատական ակտը բողոքարկվելու արդյունքում, այլ պարտատերերի առկայության պարագայում վարույթը միևնույն է շարունակվելու է՝ **չնայած այն հանգամանքին, որ ի սկզբանե նա է հանդիսացել «սնանկության վարույթի նախաձեռնողը»**, քանի որ սնանկության ինստիտուտի **նպատակը** միայն սնանկության դիմում ներկայացրած պարտատիրոջ սեփականության իրավունքի պաշտպանության ապահովումը չէ, այլ մի կողմից՝ **հնարավորության դեպքերում, պարտապանի գույքային դրությունը կայունացնելը (և նրա տնտեսական գործունեության շարունակականությունն ապահովելու համար երաշխիքներ ստեղծելը), մյուս կողմից՝ բոլոր պարտատերերի պահանջներն արդար և համամասնորեն բավարարելը, որպիսի նպատակներն իրագործելու արդյունավետությունն ուղղակիորեն կապ ունի այդ գործընթացի կայունության, որոշակիության և կանխատեսելիության հետ:***

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը շեշտում է նաև, որ սնանկության վարույթի շարունակականության երաշխավորումը կարևորվում է ոչ միայն վարույթին արդեն իսկ պարտատիրոջ կարգավիճակ ունեցող այլ պարտատերերի և պարտապանի շահերի ապահովման տեսանկյունից, որոնց իրավունքների նկատմամբ ինտենսիվ միջամտությունը՝ սնանկության վարույթի բնույթով և հետապնդված նպատակներով պայմանավորված, անառարկելի է, այլև սնանկության վարույթի տարբեր գործընթացներին մասնակցություն ունեցող այլ բարեխիղճ անձանց իրավունքների ապահովման տեսանկյունից (ի թիվս այլոց՝ կարելի է առանձնացնել պարտապանի գույքի գնորդներին):

Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սնանկության վարույթով, որը, ինչպես նշվեց, սովորական քաղաքացիաիրավական շրջանառությունից տարբերվող, ուրույն համապարփակ ու բազմափուլ գործընթաց է՝ իրեն բնորոշ և վերոհիշյալ առանձնահատկություններով հանդերձ, ինչ-որ առումով

հենց այդ առանձնահատկություններով պայմանավորված, եզրափակվում է (պետք է եզրափակվի), պարտատեր(եր)-պարտապան(ներ) պարտավորական հարաբերությունների շղթան՝ անկախ վարույթի ելքից (ֆինանսապես առողջացում, լուծարում), որի արդյունքում որոշակիանում է պարտատերերի և պարտապանի գույքի և պարտավորությունների ծավալը, ըստ այդմ՝ նաև սեփականության իրավունքի ծավալը, իսկ պարտապանի մասով՝ նաև իր կարգավիճակը, մասնավորապես, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կարողությունն ու հեռանկարը:

5.4. Սնանկության վարույթի կայունության, որոշակիության ու կանխատեսելիության կարևորությունը նկատի ունենալով՝ խնդրո առարկա վարույթով հետապնդվող ընդհանուր խնդիրների և կոնկրետ պարտավորական հարաբերությունների համալիր կարգավորման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության անխոչընդոտ իրականացման և զարգացման համար անհրաժեշտ բարենպաստ միջավայրն ու պայմանները հաստատուն/կայուն պահելու համար, Սահմանադրական դատարանը հատկապես կարևորում է այս գործերով պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի բողոքարկման, ներառյալ՝ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման կարգավորումների հարցը՝ իրավական որոշակիության լույսի ներքո:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն ուժի մեջ մտնելով՝ սնանկության վարույթի շրջանակներում գործարկվում են այն մի շարք առանձնահատուկ կարգավորումները, որոնք շոշափում են ոչ միայն հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատիրոջ և պարտապանի իրավունքները, այլ նաև՝ հետագայում ներգրավված պարտատերերի՝ ապահովելով վերջիններիս իրավունքների հավասարակշռված պաշտպանությունը:

Այսպես՝ Օրենքի 19-րդ հոդվածի ուժով պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, ի թիվս այլ հետևանքների, դատարանը՝

- կառավարչին պարտավորեցնում է ոչ ուշ, քան համապատասխան դատական ակտերի ուժի մեջ մտնելու պահից՝ 5 օրվա ընթացքում, պարտապանին

սնանկ ճանաչելու, կառավարիչ և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին տեղեկությունները հրապարակել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.

- պարտապանին լուծարելու մասին որոշում կայացնելու պահից անհապաղ որոշում է կայացնում պարտապանի գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքները կասեցնելու մասին.

- արգելանք է դնում պարտապանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա, բացառությամբ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի.

- պարտապանին գրավոր պարզաբանում է սույն օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականության և դրա խախտման հետևանքների մասին՝ միաժամանակ պարզաբանումը հրապարակելով դատական իշխանության պաշտոնական կայքում.

- պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ այն ստուգումների և ուսումնասիրությունների, որոնք սկսվել են, կամ որոնց վերաբերյալ հանձնարարագրերը հրապարակվել են մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվելը, ինչպես նաև վարչապետի համաձայնության առկայության պարագայում՝ տեխնիկական և հրդեհային անվտանգության ապահովման կամ բնապահպանության ոլորտում իրականացվող վերահսկողական գործառույթների, այն պարագայում, երբ առկա է քաղաքացիների կյանքին, առողջությանն սպառնացող անմիջական վտանգ կամ բնական կամ տեխնաժին բնույթի արտակարգ իրավիճակի առաջացման վտանգ: Պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի գործողության և լուծարման վարույթում գտնվող պարտապանի գործունեության վերսկսման ժամանակահատվածում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով

նախատեսված դեպքերում ստուգման կամ ուսումնասիրության իրականացման համար դատարանի որոշում չի պահանջվում:

- պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կասեցվում են պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալում մասնակցություն ունեցող անձանց՝ օրենքով և պարտապանի կանոնադրությամբ սահմանված գույքի կառավարման և տնօրինմանը վերաբերող այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ: Նշված լիազորությունների իրականացումը կարող է թույլատրվել դատարանի որոշմամբ՝ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում:

Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից պարտապանը (ղեկավարը) գործում է Օրենքի 47-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված կարգով:

Ավելին, Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրն ամրագրում է.

«2. պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝

1) պարտապանի պարտավորությունների կատարման ժամկետները համարվում են սկսված.

2) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, բացառությամբ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերի, ինչպես նաև սնանկության վարույթում բնականոն գործունեության արդյունքով առաջացող հարկային և այլ վճարների գծով պարտավորությունների.

3) դադարում է պարտապանի վճարային, ներառյալ՝ հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների նկատմամբ տոկոսների հաշվարկումը, ինչպես նաև այդ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ցանկացած տեսակի տույժերի, տոկոսների և տուգանքների հաշվեգրումը.

4) կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային

տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով.

5) կարճվում է պարտապանի վերաբերյալ գույքային բռնագանձումներով կամ ոչ գույքային բնույթ ունեցող ցանկացած կատարողական վարույթ, որն ազդում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառվող գույքի և իրավունքների վրա, բացառությամբ սույն օրենքով սահմանված այլ դեպքերի.

6) վերանում են պարտապանի գույքի վրա դրված արգելանքներն ու սահմանափակումները»:

Սնանկության վարույթի առանձնահատկություններով պայմանավորված՝ Օրենքի հիշատակված և այլ վերաբերելի կարգավորումների համակողմանի հետազոտությունը թույլ է տալիս Սահմանադրական դատարանին փաստել, որ և՛ օրենսդրական, և՛ իրավակիրառ մակարդակում սույն դատական ակտի վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկման, ինչպես նաև նոր և նոր երևան եկած հանգամանքների հիմքերով վերանայման վարույթների բովանդակության և ծավալի հարցում պետք է ցուցաբերել պատշաճ աջալրջություն՝ հաշվի առնելով դրա հնարավոր բացասական բովանդակություն ունեցող իրավական հետևանքները (առանձին դեպքում՝ անշրջելի) պարտատերերի և պարտապանի իրավունքների երաշխավորման համատեքստում:

Այս գործերով վարույթների առանձնահատկություններից մեկն այն է, որ սնանկ ճանաչելու վերաբերյալ վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, և այդ պահից մինչև այլ պարտատերերի՝ դատավարությանը ներգրավման հարցի լուծումը՝ դատավարության միակ մասնակիցները հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատերն/պարտատերերն ու պարտապանն են: Վերջիններս էլ հանդիսանում են սնանկ ճանաչելու վերաբերյալ վճռի հասցեատերերը, և միայն նրանք են օժտված այդ ակտը բողոքարկելու իրավունքով: **Հետևաբար՝ բացի** հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատիրոջից/**պարտատերերից ու պարտապանից, դատավարության մյուս կամ հավանական սուբյեկտների դատավարական վարքագիծը միշտ կանխ-**

որոշված է լինելու արդեն իսկ ուժի մեջ մտած (անբողոքարկելի դարձած) սնանկ ճանաչելու մասին վճռի իրողությամբ, ի թիվս այլնի նաև՝ ուժի մեջ մտած (անբողոքարկելի դարձած) սնանկ ճանաչելու մասին վճիռը բողոքարկելու (նոր հանգամանքով վերանայման բողոք ներկայացնելու) առումով:

Միևնույն ժամանակ սնանկության վարույթի շրջանակներում առկա են մի շարք դատավարական ընթացակարգեր/գործիքներ, որոնք միտված են, ի թիվս այլնի, սնանկ ճանաչելու վերաբերյալ վճիռն ուժի մեջ մտնելուց հետո դատավարությանը ներգրավված սուբյեկտների, մասնավորապես՝ հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատեր չհանդիսացող պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, այդ թվում՝ Օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված առանձին քաղաքացիական գործեր հարուցելու միջոցով:

5.4.1. Իրավական որոշակիության և արդար դատաքննության իրավունքի լույսի ներքո դատական ակտի վերջնականության *res judicata* սկզբունքին իրենց դատական ակտերում բազմիցս անդրադարձել են Սահմանադրական դատարանը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:

Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը 2020 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1515 որոշմամբ գտել է, որ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով հայցի՝ դատարանի կողմից կրկնակի քննության արգելքը նպատակ ունի, նախ՝ երաշխավորել իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի իրացումը՝ ապահովելով դատական որոշումների վերջնականությունը և կանխելով նույն հարցի վերաբերյալ դատարանի կողմից տարաբնույթ որոշումների կայացումը: Երկրորդ՝ նույն հարցի կրկնակի քննության արգելքը կոչված է ապահովելու արդյունավետ արդարադատության իրականացումը՝ թույլ չտալով նույն հարցով դատարանին կրկնակի ծանրաբեռնելը: Ի վերջո, այդ արգելքի նպատակն է նաև բացառել հայցվորի կողմից դատական պաշտպանության իրավունքի չարաշահումը:

Մեկ այլ որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ «(...) օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերջնականության սկզբունքից բացառություն կարող է լինել միայն ծանրակշիռ հիմնավորումներով, քանի որ հիշյալ հիմնարար սկզբունքի իրավական արժեքը պայմանավորված է օրինական ուժի մեջ մտած

դատական ակտով դրա հասցեատերերի համար ստեղծված իրավական վիճակի կայունությունն ապահովելու (դրանով իսկ իրավական որոշակիությունը երաշխավորելու) սահմանադրական հրամայականով» (2024 թվականի հունվարի 23-ի ՍԴՈ-1712 որոշում):

Սահմանադրական դատարանը օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերջնականության սկզբունքից բացառությունների առնչությամբ արտահայտել է նաև հետևյալ իրավական դիրքորոշումները.

«Իր հիմնարար իրավական արժեքով հանդերձ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերջնականության սկզբունքը բացարձակ չէ, և դրանից կարող է լինել բացառություն՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով՝ արդարադատության այնպիսի թերության ուղղման նպատակով, որի բացահայտմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն անհամատեղելի է դառնում արդար դատաքննության բուն էության հետ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման իրավունքը պահանջում է օրենքով նախատեսված հանգամանքների և պայմանների առկայության պարագայում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավաչափության ստուգման հնարավորություն, որի իրականացումը, միաժամանակ, չի կարող հանգեցնել վերջնական դատական ակտի՝ վերաքննության կամ վճռաբեկության ընդհանուր կարգով բողոքարկման քողարկված հնարավորության» (2024 թվականի հունվարի 23-ի ՍԴՈ-1712 որոշում):

«Ելնելով մարդկանց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առումով քննության առարկա իրավակարգավորումների բացառիկ կարևորությունից, ՀՀ սահմանադրական դատարանը, ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ վճռաբեկ դատարանի ուշադրությունը հրավիրելով սահմանադրական դատարանի՝ 15.07.2011 թ. ՍԴՈ-984 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների վրա, կրկին արձանագրում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական և/կամ կոն-

վենցիոն իրավունքների վերականգնումը» (2013 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1099 որոշում):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորվող՝ դատարանի առջև արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանել Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որով ամրագրված է, ի թիվս այլնի, որ իրավունքի գերակայությունը պայմանավորվող Պետությունների ընդհանուր ժառանգության մի մասն է: Իրավունքի գերակայության հիմնարար կողմերից մեկն իրավական որոշակիության սկզբունքն է, որով պահանջվում է, *inter alia*, որ երբ դատարանները որևէ հարցի վերաբերյալ կայացնում են **վերջնական որոշում, այդ որոշումը չպետք է կասկածի տակ դրվի** (Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի [ՄՊ] [Brumărescu v. Romania [GC]], թիվ 28342/95, § 61, ՄԻԵԴ 1999-VII): *Իրավական որոշակիությունը ենթադրում է res judicata սկզբունքի, այն է՝ վճիռները վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքով ընդգծվում է, որ որևէ կողմ իրավունք չունի պահանջելու վերջնական և պարտադիր ուժ ունեցող վճիռ վերանայում՝ գործը պարզապես կրկին լսելու և դրա վերաբերյալ նոր որոշում կայացնելու հնարավորություն ստանալու նպատակով: Վերադաս դատարանների վերանայման լիազորությունը պետք է իրականացվի դատական սխալները և ոչ պարզաճ իրականացված արդարադատությունն ուղղելու նպատակով, սակայն ոչ նոր քննություն իրականացնելու համար: Վերանայումը չպետք է համարել քողարկված բողոքարկում, և հարցի վերաբերյալ պարզապես երկու տեսակետի առկայության հավանականությունը կրկին քննություն իրականացնելու հիմք չէ: Այդ սկզբունքից շեղումն արդարացվում է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է՝ **էական և ծանրակշիռ հանգամանքներով պայմանավորված** (Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի [Ryabykh v. Russia], թիվ 52854/99, § 52, ՄԻԵԴ 2003-IX):*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտնել է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայումն այն բացառիկ դեպքերից է, երբ անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու և Սահմանադրական դատարանի որոշումների ու ՄԻԵԴ վճիռների արդյունավետ կատարման նպա-

տակները գերակայում են *res judicata* դոկտրինայի հիմքում ընկած սկզբունքների, մասնավորապես՝ իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ: Այս հանգամանքը շեշտադրված է ՄԻԵԴ մի շարք վճիռներում: Մասնավորապես՝ այս խնդրի առնչությամբ ՄԻԵԴ-ը նշում է, որ «...իրավական որոշակիության պահանջները բացարձակ չեն: Այս սկզբունքից շեղումն արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհաղթահարելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ: Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետը հստակորեն թույլատրում է նոր փաստերի կամ նախորդ վարույթում տեղ գտած՝ գործի ելքի վրա ազդող հիմնարար թերության հիմքով նորոգել գործի վարույթը» (Քսերաժն ընդդեմ Ալբանիայի *Xheraj v. Albania* գործով 2008թ. հուլիսի 29-ի վճռի 52-53-րդ կետեր): Դատարանն ընդունում է, որ որոշակի հանգամանքներում իրավական որոշակիությունը կարող է խախտվել՝ «էական թերությունը» կամ «ոչ պատշաճ իրականացված արդարադատությունը» ուղղելու նպատակով (Ռյաբիխը՝ վերևում հիշատակված, § 52, Ռոշկան ընդդեմ Մոլդովայի [*Roșca v. Moldova*], թիվ 6267/02, § 52, 2005 թվականի մարտի 22, և Սուտյաժնիկն ընդդեմ Ռուսաստանի [*Sutyazhnik v. Russia*], թիվ 8269/02, § 35, 2009 թվականի հուլիսի 23):

5.4.2. Վերահաստատելով իր դիրքորոշումները և ի լրումն դրանց՝ սույն գործի համատեքստում նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ սնանկության վարույթը ներառում է նաև առանձին քաղաքացիական գործեր, որոնցով ևս կայացվում են համապատասխան դատական ակտեր, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած վճռի կայունության իրավական արժեքը շատ ավելի բարձր է, քանի որ դրանից շեղումը, ի թիվս այլնի, սպառնալիքի տակ է դնելու նաև հետևանքային դատավարություններով (առանձին քաղաքացիական գործերով) կայացված և սնանկության վարույթի մասնակիցների գույքային և դրա հետ կապված այլ իրավունքների վրա ներազդող դատական ակտերի գոյությամբ պայմանավորված իրավահարաբերությունների որոշակիությունը:

Իրավական որոշակիության վերաբերյալ Սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ վերոհիշյալ դիրքորոշումները հաշվի առնելով, ինչպես նաև նկատի ունենալով սնանկության վարույթների առանձնահատկություններն ու յուրահատկությունները, որոնք ներկայացվեցին սույն որոշման նախորդ մասերում, Սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկադրված սնանկության դիմում ներկայացրած պարտատեր չհանդիսացող պարտատերերի կողմից պարտապանին սնանկ ճանաչելու մասին ուժի մեջ մտած վճիռը բողոքարկելը (նոր հանգամանքի ուժով վերանայման բողոք բերվել) և դատական ակտը վերանայելն իրավաչափ են միայն Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշած բացառիկ դեպքերում և նպատակներով, ինչպես նաև այն դեպքում, երբ նույն վարույթով հնարավոր չէ հարցը լուծել՝ առանց խախտելու *res judicata* սկզբունքը, մասնավորապես, եթե առկա չէ իրավունքի ակնկալվող պաշտպանությունն ավելի արդյունավետ եղանակով իրականացնելու հնարավորություն արդեն իսկ ուժի մեջ գտնվող դատական ակտով հարուցված (սնանկության) վարույթի շրջանակներում:

5.5. Նկատի ունենալով սնանկության գործընթացի պատշաճ կազմակերպման նշանակությունը պետության տնտեսական հիմքի կայունության համար և սնանկության հետ կապված հարաբերություններում պետության միջամտության ինտենսիվությունը, ինչպես նաև ելնելով սնանկության վարույթով հետապնդվող նպատակներից ու դրանց առանձնահատկություններից՝ հատկապես կարևորվում է պետության համարժեք վարքագիծը՝ **օրենսդրորեն կանոնակարգված պատշաճ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ստեղծման ու դրանց համահունչ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման ոլորտում, որոնք անհրաժեշտ են սնանկության վարույթի մասնակիցների իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար:**

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրական դատարանը, 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման շրջանակներում անդրադառնալով Սահմանադրության 75-րդ հոդվածի

բովանդակությանը, փաստել է. «(...) ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) արդյունավետ իրականացման համար (2) անհրաժեշտ (3) կազմակերպական (4) կառուցակարգեր և (5) ընթացակարգեր: Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը»: Սահմանադրական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշմամբ արձանագրված է. «Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները»:

Սահմանադրական դատարանի 2024 թվականի հուլիսի 22-ի ՍԴՈ-1741 որոշման համաձայն՝ նշված պահանջն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ ու իրական կենսագործմանը, քանզի իրավունքի կամ ազատության սուկ ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար. ուստի՝ համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական մակարդակում ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու համար:

Վերոշարադրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր հանգամանքի հիմքով Դիմողին սնանկ ճանաչելու վերաբերյալ **օրինական ուժի մեջ մտած դատական ակտի նոր հանգամանքի հիմքով վերանայումը** քննարկման առարկա կոնկրետ գործով չէր կարող հետապնդել հարկադրված սնանկության դիմում ներկայացրած պարտատեր չհանդիսացող ընկերության իրավունքների պաշտպանությունն ապահովելու, ենթադրյալ խախտված

սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքները վերականգնելու **իրավաչափ նպատակ**, ուստի՝ տվյալ դեպքում վերջնական դատական ակտի խնդրո առարկա հիմքով վերանայման վարույթի հնարավորությունն այս առումով ևս դուրս էր *res judicata* սկզբունքից բացառություն հանդիսացող բացառիկ դեպքերի ողջ տրամաբանությունից:

5.6. Վերոնշյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ համապատասխան օրենսդրական կարգավորումների այնպիսի մեկնաբանումը, որի պայմաններում պարտապանին սնանկ ճանաչելու մասին ուժի մեջ մտած դատարանի վճռի դեմ (ներառյալ նոր հանգամանքի հիմքով) վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունի նաև հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատեր չհանդիսացող պարտատերը, չի ապահովում Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված և 75-րդ հոդվածով սահմանված պահանջների արդյունավետ կենսագործումը, մասնավորապես՝ **խաթարում է սնանկության գործի կայունությունն ու որոշակիությունը, պարտապանի համար՝ սնանկ ճանաչելու վերաբերյալ դատական ակտի հետևանքների կանխարեսելիությունը**՝ հանգեցնելով վերջինիս ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ազատության և սեփականության իրավունքի խախտման: Միևնույն ժամանակ, սնանկության վարույթի շրջանակներում առկա է հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատեր չհանդիսացող պարտատերերի իրավունքների պաշտպանության հնարավորություն, այդ թվում՝ դիմող պարտատիրոջ՝ պարտապանի նկատմամբ ունեցած պահանջի օրինականությունը վիճարկելու առումով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառ մարմինները պետք է առկա կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը մեկնաբանեն այնպես, որ վճիռը նոր հանգամանքի հիմքով բողոքարկելու իրավունք ունենան **պարտապանն ու հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատերը (պարտատերերը)**՝ կանխելով իրավական անվտանգության հնարավոր սպառնալիքները: Հակառակ պարագայում, *այսինքն*՝ հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատեր *չհանդիսացող պարտապիրոջ կողմից* պարտապանին սնանկ ճանաչելու մասին **վճռի**

ուժի մեջ մտնելուց տևական ժամանակ անց նոր հանգամանքի հիմքով դրա բողոքարկումն ու բեկանումը հանգեցնելու են սնանկության **վարույթի փուլերի հաջորդականության ապահովման և դրանց արդյունավետ իրագործման խաթարման՝** խախտելով սնանկության վարույթի բուն նպատակները՝ մի կողմից՝ **գոյատևման ընդունակ տնտեսվարող սուբյեկտի ֆինանսական առողջացումը,** մյուս կողմից՝ **պարտատերերի պահանջների համամասնորեն բավարարումը:**

Ինչ վերաբերում է սնանկության վարույթի շրջանակներում հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատեր չհանդիսացող մյուս պարտատերերի իրավունքների պաշտպանությանը, ապա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ինչպես արդեն նշվեց, **պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի բավարարմամբ ավարտվում է միայն պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված փուլը, այլ ոչ թե ողջ սնանկության գործը,** որի ընթացքում դատարանը կայացնում է մի շարք դատական ակտեր: Այլ կերպ՝ սնանկ ճանաչելու վճռով ոչ թե ավարտվում է գործընթացը, այլ ըստ էության միայն մեկնարկում է մի բարդ, համապարփակ և բազմափուլ վարույթ, որը միտված է ոչ միայն հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատիրոջ ու պարտապանի հարաբերությունների կարգավորմանը, այլև բոլոր պարտատերերի իրավունքների ու շահերի հավասարակշռված ու արդարացի պաշտպանությանը, այդ թվում՝ նույն սնանկության վարույթի շրջանակներում քննվող առանձին քաղաքացիական գործեր նախաձեռնելուն (այդ գործերով կայացվող դատական ակտերի միջոցով՝ վարույթի բոլոր մասնակիցների համար հավասար պայմաններով ու հնարավորություններով):

Սահմանադրական դատարանը 2011 թվականի հունվարի 11-ի ՍԴՈ-932 որոշմամբ գտել է, որ ինքնանպատակ չէ այն, որ օրենսդիրը սնանկության գործում **ներառվող առանձին վարույթներով կայացվող մի շարք միջանկյալ դատական ակտեր, ի տարբերություն մյուսների, համարում է բողոքարկելի դատական ակտեր:** Դրանք իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են կասեցնել կամ խոչընդոտել պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, սնանկության գործի քննության հնարավորությունը:

Դրանցից է նաև, ի թիվս այլնի, պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, ինչպես նաև առանձին պահանջները հաստատելու մասին դատարանի որոշումը, որը կարող է բողոքարկվել ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ առանձին պահանջների կամ դրանց մի մասով (Օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մաս): Տվյալ դեպքում կոնկրետ գործով հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատեր չհանդիսացող պարտատերը (ընկերությունը) զրկված չէր, օրինակ՝ «**Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին**» Դատարանի որոշումը (որպես ուղղակիորեն իր իրավունքներին առնչվող դատական ակտի) հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատիրոջ պահանջի մասով նոր հանգամանքի հիմքով վերանայման վարույթ նախաձեռնելու իրավական հնարավորությունից՝ **դրանով իսկ իրացնելով իր իրավունքների և շահերի արդյունավետ պաշտպանությունը:**

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն գործի շրջանակներում սնանկության գործեր քննող դատարանները (տվյալ դեպքում՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը) սնանկ ճանաչելու վերաբերյալ ուժի մեջ մտած վճիռը նոր հանգամանքի հիմքով վերանայել են հարկադրված սնանկության դիմում ներկայացրած պարտատեր չհանդիսացող պարտատիրոջ վերանայման բողոքի հիման վրա, այսինքն՝ Օրենքի խնդրահարույց դրույթը մեկնաբանել և կիրառել են սույն որոշմամբ նույն դրույթի վերաբերյալ Սահմանադրական դատարանի մեկնաբանություններից տարբերվող մեկնաբանությամբ, ուստի՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման:


Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն պարտապանը և հարկադրված սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած պարտատերը (պարտատերերը):

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

18 մարտի 2025 թվականի
ՍԴՈ-1773